# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ՇՀԾՁԲ-13-1-11/6 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2014թ-ի հունվարի 9-ին կնքված ՊԵԿ-ՇՀԾՁԲ-13-1-11/6-1 պայմանագրում 2014թ-ի փետրվարի 3-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման նպատակով 03.02.2014թ. կնքվել է համաձայնագիր: Միաժամանակ ծառայության մատուցման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 25.12.2014թ.

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544 626:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

## Համաձայնագիր-1
## 09.01.14թ. կնքված N ՊԵԿ-ԾՀԾՁԲ-13-1-11/6-1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «03» փետրվարի 2014թ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Գևորգյանի մի կողմից, և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Եսայանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 09.01.14թ. կնքված N ՊԵԿ-ԾՀԾՁԲ-13-1-11/6-1 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Կողմերը որոշեցին Պայմանագրի 7.1 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:
1.2.Պայմանագրի թիվ-1 հավելվածով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը սահմանել մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:
1.3. Սահմանել, որ Պատվիրատուն պայմանագրի թիվ-1 հավելվածով նախատեսված մատուցված ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:
1.4.Կողմերը որոշեցին 09.01.14թ. կնքված N ՊԵԿ-ԾՀԾՁԲ-13-1-11/6-1 գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2014 թվականի հունվարի 9-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:
2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե | «Այյունեթվորքս» ՍՊԸ |
| Ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք. Երևան, Տերյան 19-4 |
| ՀՎՀՀ 02591206 | ՀՎՀՀ 02588485 |
| Հ/Հ 900011054013 | Հ/Հ 2050422215691001 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝ Ա. Գևորգյան | «Այյունեթվորքս» ՍՊԸ տնօրեն Ա.Եսայան |

Հավելված
Հաստատված է
«09» հունվարի 2014թ. կնքված
N ՊԵԿ-ՇՀԾՁԲ-13-1-11/6-1
գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների սպասարկման ծառայություններ | 4232 | 19559250 | 39118500 | 58677750 | 78237000 | 97796250 | 117355500 | 136914750 | 156474000 | 176033250 | 195592500 | 234711000 | 234711000 |

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՎՀՀ 02591206
Հ/Հ 900011054013

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Կոզլյան

**ԿԱՏԱՐՈՂ**
«Այյունեթվորքս» ՍՊԸ
ք. Երևան, Տերյան 19-4
ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 2050422215691001

«Ինեկոբանկ» ՓԲԸ

«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Նսայան